Հավելված
ՀՀ կառավարության 2015 թվականի
օգոստոսի 13-ի N 937 - Ն որոշման

# Ս Տ ՈՒ Գ Ա Թ Ե Ր Թ N___

## ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

Ստուգման սկիզբը
20 թ. _______________ ________
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

Ստուգման ավարտը
20 թ. _______________ ________
(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)

Ստուգման հիմքն է ____________________________________________________________
____________________________________________________________
____________________________________________________________

Ստուգման ենթակա հարցերի շրջանակը՝ համաձայն NN 1 և 2 ձևերի ______________________________
____________________________________________________________
____________________________________________________________

Ստուգվող աուդիտ իրականացնող անձի՝

անվանումը ____________________________________________________________

գտնվելու վայրը ____________________________________________________________

լիցենզիան տալու ամսաթիվը ____________________________________________________________

լիցենզիայի համարը ____________________________________________________________

այլ կոնտակտային տվյալներ ____________________________________________________________

ՀՎՀՀ-ի ծածկագիրը՝ GGGGGGGG
Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք՝

____________________________________________________________
(պաշտոնը)
____________________________________________________________
(ազգանունը, անունը, հայրանունը)
____________________________________________________________
(պաշտոնը)
____________________________________________________________
(ազգանունը, անունը, հայրանունը)
____________________________________________________________
(պաշտոնը)
____________________________________________________________
(ազգանունը, անունը, հայրանունը)

Ստուգվող աուդիտ իրականացնող անձի ղեկավար կամ
լիազորված անձ ________________________________________
(ազգանունը, անունը, հայրանունը)

__________________________
(ստորագրությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ձև N 1

# Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

## ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| NN ը/կ | Հարցը | Այո | Ոչ | Չ/պ | Կշիռը | Մեկնաբանու-թյունները | Հարցի համար հիմք հանդիսացող իրավական նորմը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1. | Աուդիտ իրականացնող անձի կողմից լիցենզիա ստանալու ժամանակ ներկայացված՝ լիցենզավորմանը վերաբերող փաստաթղթերը, արդյոք, զե՞րծ են եղել էական նշանակություն ունեցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվությունից: | | | | 5 | | «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ |
| 2. | Լիցենզիայի պայման ապահովող պահանջներին առնչվող կամ դրանք հիմնավորող փաստա-թղթերում առկա տեղեկությունը համապատասխանո՞ւմ է, արդյոք, ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված տեղեկությանը: | | | | 5 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված |
| 3. | Պահպանվե՞լ է, արդյոք, լիցենզիա չունեցող, այդ թվում նոր ստեղծվող կամ լիցենզիայի գործողությունը դադարեցված կազմակերպության կողմից «աուդիտ», «աուդիտոր», «աուդի-տորական» բառերն իր անվան-ման մեջ 6 ամսվանից ավելի ժամկետով չօգտագործելու պահանջը: | | | | 2 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մաս |
| 4. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդի-տորական գործունեությունից և օրենքով սահմանված թույլատրելի ծառայություններից բացի ձեռնարկատիրական որևէ այլ գործունեությամբ չզբաղվելու պահանջը: | | | | 5 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մաս |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 5. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդիտ իրականացնող անձի կողմից օրենքով սահմանված դեպքերում աուդիտորական ծառայություն չիրականացվելու պահանջը: | | | | 4 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 6. | Աուդիտ իրականացնող անձը վարու՞մ է, արդյոք, իր կողմից կնքված պայմանագրերի գրանցամատյան՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով (ժամանակագրական առումով՝ հերթականությունը, ծառայությունների մատուցման ժամկետները և այլն): | | | | 3 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետ, ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 122-Ն որոշում |
| 7. | Լիազորված մարմին ներկայացված եռամսյակային հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը համապատասխանու՞մ է, արդյոք, աուդիտ իրականացնող անձանց կողմից կնքված պայմանագրերի գրանցամատյանում գրանցված տեղեկատվությանը: | | | | 3 | | ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 122-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 4-րդ կետեր, ՀՀ կառավարության 2012 թվականի հունվարի 26-ի N 82-Ն որոշում |
| 8. | Գրանցման ենթակա բոլոր պայմանագրե՞րն են, արդյոք, գրանցվել գրանցամատյանում: | | | | 3 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետ, ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 122-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետ |
| 9. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիայի գործողությունը կասեցված լինելու ժամանակահատվածում աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտորական ծառայություն չիրականացվելու պահանջը: | | | | 5 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մաս, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր |
| 10. | Պահպանվե՞լ է, արդյոք, լիցենզիայի պահանջներից որևէ մեկի խախտման դեպքում լիցենզիայի գործողությունը կասեցնելու նպատակով լիազորված մարմնին 30-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնելու պահանջը: | | | | 5 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի «ե» կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 11. | Պահպանվե՞լ են, արդյոք, առանց լիցենզիայի աուդիտորական ծառայություն չիրականացնելու, ինչպես նաև աուդիտորական ծառայություններն առնվազն մեկ աուդիտորի կողմից իրականաց-վելու պահանջները: | | | | 4 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 12. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտի և հարակից ծառայու-թյունների փաստաթղթավորումը աուդիտորական միջազգային ստանդարտներին համապա-տասխան իրականացվելու պահանջը: | | | | 5 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մաս, ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1931-Ն որոշմամբ հաստատված ԱՄՍ-ներ |
| 13. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդի-տորական եզրակացությունները, աուդիտորական հաշվետվու-թյունները, աուդիտորի աշխատանքային փաստաթղթերը և աուդիտի անցկացման հետ կապված այլ փաստաթղթեր Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան աուդիտի անցկացմանը հաջորդող հինգ տարվա ընթացքում պահպանելու պահանջը: | | | | 3 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 14. | Պահպանվե՞լ են, արդյոք, աուդիտորական եզրակացությունն առնվազն երկու օրինակից կազմվելու, աուդիտի անցկացման համար պատասխանատու աուդիտորի կողմից ստորագրվելու և աուդիտ իրականացնող անձի ղեկավարի ստորագրությամբ հաստատվելու պահանջները: | | | | 3 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերություն |
| 15. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդիտո-րական ծառայությունների իրականացումից հրաժարվելու և պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում դրանց պատ-ճառների մասին լիազորված մարմնին սահմանված ժամկետ-ներում տեղեկացնելու պահանջը: | | | | 3 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «զ. 1» կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 16. | Պահպանվե՞լ է, արդյոք, տուգանքի կիրառումից հետո 3 տարվա ընթացքում միևնույն տուգանքի կիրառման համար հիմք հանդիսացող խախտումը չշարունակելու կամ այդպիսի նոր խախտում թույլ չտալու պահանջը: | | | | 3 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31.3-րդ հոդվածի 3-րդ մաս |
| 17. | Պահպանվե՞լ է, արդյոք, հավաստի աուդիտորական եզրակացություն ներկայացնելու պահանջը: | | | | 5 | | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մաս |
| 18. | Պահպանվե՞լ են, արդյոք, աուդիտորների վարքագծին ներկայացվող պահանջները: | | | | 4 | | ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի N 499-Ն որոշում |
| 19. | Ապահովվե՞լ է, արդյոք, աուդիտի որակի վերահսկողության համակարգի կանոնների և ընթացակարգերի համապատաս-խանությունը որակի վերահսկո-ղության միջազգային ստանդարտներին: | | | | 5 | | ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1931-Ն որոշմամբ հաստատված ՈՎՄՍ 1 |
| 20. | Պահպանվե՞լ են, արդյոք, աուդիտորական կազմակեր-պության կողմից իր՝ փողերի լվացման և ահաբեկչության հնարավոր ու առկա ռիսկերը բացահայտելու և գնահատելու և բացահայտված ռիսկերի արդյունավետ կառավարման ու զսպման քաղաքականություն, վերահսկման մեխանիզմներ, ընթացակարգեր ունենալու, ինչպես նաև պարբերաբար, բայց ոչ ուշ, քան տարեկան մեկ անգամ հնարավոր և առկա ռիսկերը վերանայելու պահանջները: | | | | 2 | | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդված |
| 21. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդիտորական կազմակերպու-թյան կողմից՝ անշարժ գույքի առուվաճառք, հաճախորդի գույքի կառավարում, բանկային և արժեթղթային հաշիվների կառավարում, իրավաբանական անձանց հիմնադրման, գործու-նեության կամ կառավարման | | | | 2 | | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասեր |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | համար գույքի տրամադրում, իրավաբանական անձանց հիմնադրման, գործունեության կամ կառավարման գործառույթ-ների իրականացում, ինչպես նաև իրավաբանական անձանց կանոնադրական (բաժնեհավաք և այլն) կապիտալում բաժնեմասի (մասնակցության, փայի և այլն) օտարում (ձեռքբերում), կամ իրավաբանական անձանց անվանական կամ շուկայական արժեքով բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի և այլն) օտարում (ձեռքբերում) իրականացնելու դեպքում կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկին հաշվետվություն տրամադրելու պահանջը՝ անկախ դրանցում ներգրավված գումարի չափից: | | | | | | |
| 22. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդիտորական կազմակեր-պության կողմից  գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի չորակելու դեպքում կատարված հիմնավորումները, եզրահանգումները, վերլուծության ընթացքը և արդյունքները փաստաթղթավորելու և սահմանված կարգով ու ժամկետում պահպանելու պահանջը: | | | | 3 | | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մաս |
| 23. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդիտորական կազմա-կերպության կողմից  լիցենզա-վորմանը հաջորդող մեկամյա ժամկետում՝ սահմանված կարգով ՀՀ կենտրոնական բանկում հաշվառվելու պահանջը: | | | | 2 | | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մաս |
| 24. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդիտո-րական կազմակերպության կող-մից «Փողերի լվացման և ահաբեկ-չության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի | | | | 2 | | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | պատշաճ իրականացմանն ուղղված ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված համձնարարականների կատարման պահանջը: | | | | | | 1-ին մասի 6-րդ կետ |
| 25. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդիտորական կազմակերպության կողմից հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելու պահանջը, ինչպես նաև՝ հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն իրականացնելիս՝ ռիսկի կառավարման այնպիսի ընթացակարգեր ունենալու պահանջը, որոնք կբացահայտեն և կգնահատեն հնարավոր կամ առկա ռիսկերը և կապահովեն ռիսկերին համարժեք միջոցների ձեռնարկումը: | | | | 2 | | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ, 17-րդ և 18-րդ հոդվածներ, Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի 21-43-րդ կետեր |
| 26. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդիտորական կազմակերպության կողմից գործարքի կամ գործարար հարաբերության ավարտից հետո 5 տարվա ընթացքում « Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով պահանջվող տեղեկությունների (ներառյալ՝ փաստաթղթերի) պահպանման պահանջը՝ անկախ նրանից, թե գործարքը կամ գործարար հարաբերությունը շարունակվե՞լ, թե՞ դադարեցվել է: | | | | 3 | | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդված |
| 27. | Պահպանվե՞լ է, արդյոք, 10-ից ավելի աշխատող ունեցող աուդիտորական կազմակերպության կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված ներքին իրավական ակտեր (քաղաքականություն, հայեցակարգ, կարգ, կանոն, կանոնակարգ, ընթացակարգ, հրահանգ կամ այլ) ունենալու պահանջը և ՀՀ կենտրոնա- | | | | 3 | | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 23-րդ և 25-րդ հոդվածներ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| | կան բանկի սահմանած դեպ-քերում ու հաճախականությամբ ներքին աուդիտ («Փողերի լվաց-ման և ահաբեկչության ֆինանսա-վորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով նախատեսված պարտա-կանությունների ու գործառույթ-ների պատշաճ իրականացումը վերստուգելու համար) իրականացնելու պահանջը: | | | | | | |
| 28. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդի-տորական կազմակերպության կողմից ներքին դիտարկումների մարմին, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կարգով և մասնա-գիտական համապատաս-խանության չափանիշների հիման վրա որակավորում ունեցող ներքին դիտարկումների մարմնի աշխատող ունենալու պահանջը: | | | | 2 | | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդված |
| 29. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդիտորական կազմա-կերպության կողմից գործարքի կամ գործարար հարաբերության իրականացումը մերժելու կամ դադարեցնելու և գործարքը կամ գործարար հարաբերությունը կասկածելի դիտարկելու պահանջը, երբ հնարավոր չէ նույնականացնել հաճախորդին (լիազորված անձին, իրական շահառուին) և պարզել նրա ինքնությունը, պարզել հաճախորդի գործարար բնութագիրը, ճշտել գործարար հարաբերության նպատակը և նախատեսվող բնույթը կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստացվել է գործարքի կամ գործարար հարաբերության իրականացման մերժման կամ դադարեցման հանձնարարական: | | | | 2 | | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 30. | Պահպանվե՞լ է, արդյոք, աուդիտորական կազմակերպության կողմից Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում ներառված անձանց հետ գործարքի կամ գործարար հարաբերության ժամանակ ահաբեկչության հետ կապված անձանց ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքն անմիջապես և առանց նշված անձանց նախապես տեղեկացնելու սառեցնելու և գործարքը կամ գործարար հարաբերությունն անմիջապես կասկածելի որակելու և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ ՀՀ կենտրոնական բանկին հաշվետվություն տրամադրելու պահանջը: | | | | 2 | | «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ մասեր |

Հարցաշարում «Այո», «Ոչ» և «Չ/պ» պատասխանների նշանակությունը

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | «Այո»՝ այո, առկա է, համապատասխանում է, բավարարում է | V | | |
| 2. | «Ոչ»՝ ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում | | V | |
| 3. | «Չ/պ»՝ չի պահանջվում, չի վերաբերում | | | V |

Ձև N 2

# Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

## ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑԻ ԿՈՂՄԻՑ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| NN ը/կ | Հարցը | Այո | Ոչ | Չ/պ | Կշիռը | Մեկնաբանու-թյունները | Հարցի համար հիմք հանդիսացող իրավական նորմը |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 1. | Մասնագիտացված կառույցի կողմից պահ-պանվե՞լ է, արդյոք, հավատարմագրման պայմաններից կամ պահանջներից որևէ մեկը չխախտելու պահանջը, ինչպես նաև իր կողմից լիազորված մարմին հավատար-մագրման համար ներ-կայացված փաստա-թղթերում առկա տեղե-կությունները համապա-տասխանու՞մ են, արդյոք, իրականությանը: | | | | 5 | | ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 1007-Ն որոշման 9-րդ կետ |
| 2. | Մասնագիտացված կառույցի կողմից պահպանվե՞լ է, արդյոք, վկայականն այլ անձանց օգտագործման չտալու, չօտարելու և չգրավա-դրելու պահանջը: | | | | 20 | | ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 1007-Ն որոշման 24-րդ կետ |
| 3. | Մասնագիտացված կառույցի կողմից պահպանվե՞լ է, արդյոք, իր անվանման կամ գտնվելու վայրի փոփոխման դեպքում սահմանված կարգով և ժամկետներում վկայա-կանի վերաձևակերպման համար լիազորված մարմին դիմում ներ-կայացնելու պահանջը: | | | | 5 | | ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 1007-Ն որոշման 29-րդ կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 4. | Մասնագիտացված կառույցի կողմից պահպանվե՞լ է, արդյոք, նախազգուշացման մասին պատշաճ ձևով տեղեկացվելու օրվանից սահմանված ժամկե-տում նախազգուշացման համար հիմք հանդի-սացած խախտումները վերացնելու և դրա մասին հիմնավորող փաստաթղթերը լիազոր մարմին ներկայացնելու պահանջը: | | | | 20 | | ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 1007-Ն որոշման 35-րդ կետ |
| 5. | Մասնագիտացված կառույցի կողմից պահ-պանվե՞լ է, արդյոք, աուդիտորական գործունեության օրենս-դրության պահանջների այնպիսի խախտումներ թույլ չտալու պահանջը, որոնց հետևանքով ուղղակի սպառնալիք է առաջացել պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, անձանց կյանքի, առողջության կամ բարքերի, ինչպես նաև այլոց իրավունքների, ազատությունների, պատվի կամ բարի համբավի նկատմամբ: | | | | 10 | | ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 1007-Ն որոշման 36-րդ կետ |
| 6. | Մասնագիտացված կառույցի կողմից պահ-պանվե՞լ է, արդյոք, նախազգուշացման մասին որոշումն անբողոքարկելի դառնալուց հետո մեկ տարվա ընթացքում կրկին նույն խախտումը չկատարելու պահանջը: | | | | 20 | | ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 1007-Ն որոշման 34-րդ կետ, 37-րդ կետի 3-րդ ենթակետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
|---|---|---|---|---|---|---|---|
| 7. | Մասնագիտացված կառույցի կողմից պահպանվե՞լ է, արդյոք, իր գործունեությունը կասեցված լինելու ընթացքում այդ գործունեությունը կամ այդ գործունեության առանձին գործառույթներ, կամ գործողություններ չիրականացնելու պահանջը: | | | | 20 | | ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 1007-Ն որոշման 36-րդ կետ, 37-րդ կետի 5-րդ ենթակետ |

Հարցաշարում «Այո», «Ոչ» և «Չ/պ» պատասխանների նշանակությունը

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | «Այո»՝ այո, առկա է, համապատասխանում է, բավարարում է | V | | |
| 2. | «Ոչ»՝ ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում | | V | |
| 3. | «Չ/պ»՝ չի պահանջվում, չի վերաբերում | | | V |